

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Խաչատրյան Հասմիկ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

khachhasmik@yahoo.com

DOI: 10.54503/978-9939-970-08-0-62

Բանալի բառեր. Խաղտիք գավառ, Համշենի բարբառ, հնչյունական համակարգ, խուլ հնչյուն, շնչեղ ձայնեղ, ձայնավոր, մ, ն ոնգային հնչյուններ:

Նախաբան

Պատմական Հայաստանի Համշեն գավառը գտնվել է Խաղտիքի երկրամասի հյուսիսարևմտյան լեռնային հատվածում՝ լինելով հայոց պետականության մի մասը և ուրույն տեղ ունենալով հայոց պատմության մեջ:

Ըստ Լուսինե Սահակյանի՝ այն թյուր կարծիքն է ձևավորված, որ Համշենի հայկական իշխանության հիմնումով են հայության հոծ գանգվածները հաստատվել այդ կողմերում, սակայն նա կարծում է, որ «Հունահռոմեական և հայկական սկզբնաղբյուրներում վկայված հիմնավոր և հավաստի փաստերը ցույց են տալիս, որ Խաղտիքում այլ ժողովուրդների հարևանությամբ ապրել և արարել է հայ ժողովուրդը՝ կերտելով իր քաղաքական, հոգևոր և մշակութային պատմությունը, անցել ռազմական ուղի, որոնք հող պետք է նախապատրաստեին հետագայում այս գավառի հյուսիսարևմտյան ծայրամասում Համշենի հայկական իշխանության կազմավորման համար»¹: Ա. Մելքոնյանի կարծիքով՝ «Իրականում Խաղտիքը, հաճախ մաս

¹ Լ. Սահակյան, *Համշենը հայկական ձեռագրերում* (այսուհետև՝ ՀՀՁ), ԵՊՀ հրատ., Ե., 2019, էջ 19:

կազմելով Տայք աշխարհին, հնագույն ժամանակներից եղել է հայաբնակ: Պատահական չէ, որ այստեղ ապրող առաջին բնակիչներին յոյներն անուանել են արմենոխալիբներ, այսինքն՝ Խաղտիք-Խալիբ երկրի հայ բնակիչներ»²: Լ. Խաչիկյանը, համադրելով մի շարք պատմական ու ձեռագրական տվյալներ, եզրակացնում է, որ «Բյուզանդական կայսրության հյուսիսարևելյան Խալդեա (հայկական՝ Խաղտիք) ծայրագավառում, Հայաստանից կազմակերպված արտագաղթի հետևանքով, ստեղծվում է Համշենի հայկական իշխանությունը, որը հարատևում է երկար դարեր և զգալի դեր կատարում հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային պատմության մեջ»³:

8-9-րդ դարերում, իսկապես, ինչպես վկայված է պատմական աղբյուրներում, Համամ իշխանի և նրա հայր Շապուհ Ամասունու կողմից հիմնվում է Համշենի հայկական իշխանությունը: Չնայած հետագայում դադարում է այդ ինքնավար իշխանության գոյությունը, բայց Համշենը մնում է գուտ հայաբնակ և ներքին ինքնավարություն ունեցող շրջան: Ըստ Լ. Սահակյանի՝ «Քաջքարի լեռնագոգերում հիմնված Համշենի հայկական իշխանությունը կարողանում է յոթ դար պահպանել իր գոյությունը»⁴: 17-րդ դարում այս գավառն ամբողջովին հայերով էր բնակեցված և ուներ շուրջ 10000 տուն հայ բնակիչ: Նույն դարի վերջերին թուրքերը, մտնելով Համշեն, ավերածություններ սփռելով, հայերին ստիպեցին ընդունել մահմեդականություն: Դիմադրողների մի մասը կոտորվեց, մի մասն էլ, թողնելով Համշենը, փախավ դեպի արևմուտք: Իսկ մնացյալ հայությունը բռնի

² Ա. Մելքոնյան, *Համշեն. Պատմաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր), Համշեն և համշենահայություն (գիտաժողովի նիսթեր)*, Համագգային Վահէ Մեթյեան տպ., 2007, Երևան-Պեյրուֆ, էջ 30:

³ Լ. Խաչիկյան, *Էջեր համշինահայ պատմությունից, Աշխատություններ*, հ., Բ, Նաիրի հրատ., Ե., 2017, էջ 158:

⁴ Լ. Սահակյան, ՀՀԶ, էջ 58:

դավանափոխ եղավ և ընդունեց մահմեդականություն: Ըստ Հ. Աճառյանի՝ փախստական համշենցիներն անցան Տրապիզոնի շրջակա գյուղերը, Խուրշունլի, Գարա-Տերեի, Մյուրմենեի գավառակները և ավելի արևմուտք՝ Օրդու, Ունիե, Սամսոնի գյուղերը, անգամ՝ Նիկոմեդիա: Համշենը նոր փորձությունների ենթարկվեց նաև 1915 թվին: Շատ համշենցիներ ստվար զանգվածներով թողեցին իրենց հայրենի բնօրրանը և բնակություն հաստատեցին Կովկասում ու Սև ծովի արևելյան առափնյա շրջաններում՝ Սոչիում, Սուխումիում, Ադլերում, Նոր Աֆոնում, Գագրայում և այլն:

Համշենը (հին անունը Համամշեն) վարչականորեն Մեծ Հայքի Տայք աշխարհի Խաղտիք գավառի մի մասն էր:

Համամշենը գավառակ է Տրապիզոնի նահանգի Լազիստանի գավառում Սև ծովը թափվող Ֆորթունա գետի ավազանում՝ Սև ծովի հարավարևելյան առափնյա շրջանում: Սահմանակից է հարավարևելքից Խոտրջուրին, իսկ արևելքից և հյուսիսային կողմից շրջապատված էր Պարխարյան լեռներով ու Լազիստանով, արևմուտքից Պոնտական լեռներով:

Հ. Աճառյանը «Քննություն Համշենի բարբառի» աշխատության մեջ սևծովյան բնակավայրերում ապրող հայերին, հիմք ընդունելով բարբառային տարբերությունները, երեք ճյուղի է բաժանում՝ համշենցի կամ ճանիկցի, տրապիզոնցի և օրդուցի:

Գիտնականը կարծում է, որ ճանիկցիները բնիկ համշենցի չեն. նրանք Համշենից Գարա-Տերե և այստեղից էլ ճանիկ են գաղթել՝ կոտորածներից մի կերպ ազատվելով: Տրապիզոնցիներն էլ ոչ թե Տրապիզոն քաղաքում բնակվողներն են, այլ նրա շրջակա գյուղերի բնակիչները, որոնք հին ժամանակ Համշենից գաղթել են

⁵ Հ. Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի* (այսուհետև՝ ՔՀԲ), Ե., 1947, էջ 5:

⁶ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 3, Ե., 1991, էջ 327: Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 5:

Տրապիզոն և այնուհետև Տրապիզոնից Սև ծովի հյուսիսային եզերքի բնակավայրերը (Կովկաս): Իսկ օրդուցիները Օրդու քաղաքի շուրջը գտնված գյուղերի բնակիչներն են, որոնք հին Համշենի սերունդներ են:

Հ. Աճառյանի բերած տվյալներով Ճանիկի համշենցի հայերի թիվը կոտորածներից առաջ պատմական Հայաստանում (Տաճկաստանում) շուրջ 20000 է եղել, որոնցից հայտնի չէ, թե որքանն է կենդանի մնացել: Նույնքան էլ հաշվում է մահմեդական հայերին: Կովկաս և Սև ծովի եզերք և Կուրա գաղթած հայերի թիվը, ըստ նրա, 60000-ից ավելի է⁷:

Համշենի բարբառին վերաբերող լուրջ հետազոտություններ մինչև 1910 թ. գրեթե չկան, սակայն կան հրատարակված բավական ընդարձակ բնագրեր, որոնցից ամենակարևորը բանահավաք Ս. Հայկունու հրատարակած բարբառային բառերը և «մանր բնագրերն» են (նկատենք, որ սրանք գիտական տառադարձության է վերածել Հ. Աճառյանը): Հ. Աճառյանը, 1911 թ. «Էմինեան ազգագրական ժողովածուում» անդրադառնում է նաև Համշենի և Տրապիզոնի բարբառներին⁸, իսկ 1947 թ. գիտական շրջանառության մեջ է դնում Համշենի բարբառին վերաբերող «Քննություն Համշենի բարբառի» արժեքավոր ուսումնասիրությունը: Լեզվաբանը համարում է, որ «Գլխավորապես երկու տիպ կարելի է նկատել բարբառիս մեջ. մեկը բուն լեռնային տիպարը, որի ներկայացուցիչն է Մալա գյուղը, մյուսները Տրապիզոնի մոտիկ գյուղերի բարբառը, որը կրել է քաղաքի խոշոր ազդեցությունը»⁹: Համշենի բարբառի ամենից հարազատ ձևը, ըստ Հ. Աճառյանի, պահպանում է Մալա գյուղը,

⁷ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 10:

⁸ Հ. Աճառյան, *Էմինեան ազգագրական ժողովածու* (այսուհետև՝ ԷԱԺ), հ. Ը, Մուսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 178- 183, 184-195:

⁹ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 1951, էջ 344:

Զեֆանուր համարվում է Տրապիզոնի գյուղերից, որը նրա կարծիքով՝ «շատ պարզված» մի բարբառ է»¹⁰:

Գ. Զահուկյանը, «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ անդրադառնալով Համշենի բարբառին, ըստ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ բարբառային միավորները առանձնացնելիս Օրդուի և Տրապիզոնի խոսվածքներն ընդգրկում է Փոքր Ասիայի բարբառախմբի Պոլսի միջբարբառի մեջ, իսկ Համշենի կամ հյուսիսարևմտյան միջբարբառախմբում ներառում է Համշենի և Եդեսիայի բարբառները: Համշենի բարբառի մեջ առանձնացված են Մարթիլ (Ջանիկ), Մալա (Համշեն) և Զեֆանու (Տրապիզոնի գյուղերից) բնակավայրերը¹¹:

Բանահավաք Հ. Գուրունյանը, սակայն, իրավացիորեն փաստում է, որ «Ծեբելդայի և նրա շրջակայքի հայ բնակիչների մեծ մասը ճանիկցիներ (ջենիկցիներ) են, կան նաև տրապիզոնցիներ, օրդուցիներ, բայց պետք է ասել, որ խոսվածքները խառնվել են իրար (մաքուր խոսվածքի չեմ հանդիպել), ուստի ընթերցողը չպիտի զարմանա, որ ճանիկցու խոսվածքի մեջ տրապիզոնցու խոսելաձև հանդիպի կամ ընդհակառակը»¹²:

Ուշագրավ է նաև 2023 թ. հրատարակած «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» աշխատությունը, որի հեղինակը՝ Խաչատուր Թահմազը, լինելով ջենիկցի, գրում է. «Պոնտահայերն իրենք իրենց բաժանում են երկու հիմնական մասի՝ թրաբզոնցիների (Թրաբզոնի շրջանում բնակվողներ) և ջենիկցիների (Ջենիկ կամ Ջանիկ գավա-

¹⁰ Հ. Աճառյան, ԷԱԺ, հ. Ը, էջ 185:

¹¹ Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 33, 133-134:

¹² Հ. Գուրունյան, *Համշենահայ բանահյուսություն*, Ե., 1991, էջ 6:

ռում բնակվողներ), որոնք միմյանցից հեռու են հարյուրավոր կիլոմետրերով և ընդմիջված միատարր թուրքական բնակավայրերով, սակայն խոսում են միևնույն բարբառով»¹³:

Մենք ևս նկատել ենք, որ այսօր Հ. Աճառյանի առանձնացրած Համշենի բարբառի այդ երկու տիպերի էական տարբերությունները չկան: Լեզվի ինստիտուտում «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով» հավաքած մոտ 10 տետրերի նյութերը¹⁴, ինչպես նաև շրջանառության մեջ դրված Համշենի բարբառին վերաբերող բանահյուսական նմուշներն ու բառարանները, նաև մեր բանավոր հարցումները մեզ բերել են այն համոզման, որ ժամանակի ընթացքում, իսկապես, այդ խոսվածքները խառնվել են իրար, և կարելի է ասել, որ շատ չնչին տարբերություններով հանդերձ՝ այսօր Արևազիայում ապրող հայերը խոսում են հիմնականում մեկ ընդհանուր խոսվածքով:

Սույն հոդվածում, հիմք ընդունելով Համշենի Ունիեի Բալլուդ գյուղի խոսվածքը, մեր նպատակն է կատարել դիտարկումներ Համշենի բարբառի հնչյունական առանձնահատկությունների շուրջ՝ ներկայացնելով խոսվածքի այժմյան վիճակը:

Խնդրո առարկա Բալլուդ գյուղի խոսվածքը պատկանում է Համշենի կամ Ճանիկի ճյուղին:

Ըստ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի՝ Բալլուդ գյուղը գտնվել է Տրապիզոնի նահանգի Սամսունի գավառի Ունիեի գավառակում: 1914 թ. ուներ 185 տուն հայ բնակիչ, զբաղմունքը՝ երկրագործություն, անասնապահություն, այգեգործություն: Բաժանված էր 10 թաղերի: Ուներ Ս. Աստվածածին

¹³ Խ. Թահմազ, *Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը*, Ե., 2023, էջ 39:

¹⁴ Տե՛ս Լեզվի ինստիտուտի արխիվ, Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով (այսուհետև՝ ՀԲԱ) արված գրանցումներ (այսուհետև՝ ԼԻ արխիվ), տետրեր հ. 336, 52, 187, 39, 94, 99բ, 252, 410, 99:

անունով եկեղեցի, ինչպես նաև վարժարան: Բալլուդ գ.-ը ավերվել, բնակիչները կողոպտվել են և տեղահանվել Մեծ եղեռնի տարիներին¹⁵: Նկատենք այս գյուղի մասին հիշատակում է նաև Հ. Աճառյանը¹⁶: Հընթացս հավելենք, որ մեր բարբառախոսի (Շ. Քեյսան) վկայությամբ իր պապիկն ասել է, որ Բալլուդ գ.-ի հին հայկական անունը Մեղրուտ է եղել:

1984 թվին մենք, ըստ ՀՖԱ ծրագրի, նյութեր ենք քաղել Աբխազիայի Գուդաուտայի շրջանի Ագարակի գյուղի բնակչուհի Սիրանուշ Ենոքի Թուլումջյանից, որը ծնվել է 1937 թ. նույն շրջանի Պրիմորսկոյե գյուղում: Մեր բարբառախոսի հայրը՝ Ենոք Թուլումջյանը, ծնվել է 1898 թ. Ունիեի Բալլուդ գ.-ում, և 1924 թ. գաղթել է իր ծննդավայրից: Սիրանուշ Թուլումջյանը նշում էր, որ Ագարակի և Պրիմորսկոյե գյուղերի խոսվածքները գրեթե նույնն են: ՀՖԱ ծրագրով բարբառային նյութեր հավաքելուց տարիներ անց մենք համագործակցել ենք մեր բարբառախոսի դստեր՝ Շամիրամ Քեյսանի հետ, որը մասնագիտությամբ բանասեր է և աշխատում է Գուդաուտայի շրջանի Ագարակի գյուղի հայկական դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, և երախտագիտությամբ նշենք, որ նա շարունակաբար աջակցել է մեզ Համշենի բարբառին վերաբերող ճշգրտումներ կատարելիս:

Համշենի բարբառի Ունիեի Բալլուդ գյուղի խոսվածքի հնչյունական առանձնահատկությունները

Մեր նպատակն է, համաժամանակյա և տարածամանակյա մեթոդներով քննության ենթարկել Համշենի Ունիեի Բալլուդ գյուղի խոսվածքը՝ որպես Համշենի բարբառի մի դրսևորում: Այս հոդվածի

¹⁵ Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 1, Ե., 1986, էջ 558:

¹⁶ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 9: Տե՛ս նաև Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 3, Ե., 1991, էջ 785:

շրջանակներում մենք կդիտարկենք սույն բարբառի հնչյունական առանձնահատկությունները:

Հիշյալ խոսվածքում գործառոդ ձայնավոր հնչյունները՝ *ա, ի, է, օ, ու, ը*, իրենց որակական հատկանիշներով չեն տարբերվում հին-հայերենյան ձայնավորներից, միայն ավելանում են *ււ, ու* ձայնավորները: Ըստ մեր բարբառախոսների վկայության՝ առաջնալեզվային *ու* ունեն միայն տրապիզոնցիք: Հ. Աճառյանը արձանագրում է, որ Տրապիզոնի մոտիկ գյուղերը չունեն *ււ, է, ո* ձայնավորները, և *ււ, է* ձայնավորների փոխարեն գործածվում է *է* հնչյունը, իսկ *ո*-ի դիմաց՝ *օ*¹⁷:

Հին հայերենի *ա* ձայնավորը Համշենի այս խոսվածքում ընդհանուր առմամբ մնում է *ա* (*աղ, աճ, մաշտ (մարդ), վախ, ժածկ (շարժ), բաշար (պաշար), խաճուշ (խաչել), գայջ (կարճ)* և այլն): Շեշտանախորդ վանկերի և եռավանկ բառերի միջնավանկում *ա* ձայնավորը կա՛մ սղվում է, կա՛մ փոխվում է *ը*-ի (*ավելնուշ, էրզըննուշ, ժողվուշ, հէռընուշ, վսիխուշ, աղճուր, պուսնուշ, կօղնուշ, թատվուշ* (անձրևից թրջվել), *թատիխուշ, սօրվուշ, գարգըղօն* (կարկատան), *կընծի* (գնացի) և այլն):

Համշենի բարբառի ձայնաբանական բավականին ուշագրավ երևույթներից է *ւ*, *ն* ոնգայիններից առաջ *ա>օ* հնչյունափոխությունը: Օրինակ՝ բամբակ>*պօմբակ*, բան>*պօն*, աման>*օմօն*, ամիս>*օմիս*, բարեկենդան>*պարգիղօնկ*, թան>*թօն*, ցամաք>*ցօմակ*, կարկատան>*գարգըղօն*, նշան>*նշօն*, թանձր>*թօնզըրըր*, քամել>*քօմուշ, անալի>օնլի* և այլն:

¹⁷ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 18:

Ըստ Ա. Ղարիբյանի՝ «Այս փոփոխությունը մոտեցնում է Համ-
շենի բարբառը Զեյթունի բարբառին և մեծ չափով պատճառ է դառ-
նում բարբառի անհասկանալի լինելուն»¹⁸: Հարկ ենք համարում
արձանագրել, սակայն, որ Զեյթունի բարբառում *ա>օ* փոփոխու-
թյունը ավելի մեծ ընդգրկում ունի. միավանկ, մեկուկեսականի
բառերի մեջ և ռնգայինների մոտ շեշտված *ա>օ*՝ *ծառ>ձօռ, ցավ>ցօվ,*
աստղ>օստղ, աղ>օղ (բացառություն են կազմում *ճ, ջ, չ, ժ, շ* բաղա-
ձայնները, որոնցից առաջ գտնվող *ա*-ն միշտ մնում է անփոփոխ)¹⁹:

Մի խումբ երկվանկ բառերի թեք հոլովաձևերում *ա* ձայնա-
վորը սղվում է (*երազ-նէրազ>նէյզի, մառան-մառօն>մառնի, դանակ-*
տընազ>տընգի):

Միավանկ բառերում բառասկզբի *ե*-ի դիմաց խոսվածքում
առկա է *յէ* հնչյունակապակցությունը՝ *եզ>յէզ, ես>յէս, երբ>յէպ,*
երզ>յէրկ և այլն:

Բազմավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ի դիմաց
գործածվում է *է* ձայնավոր, ինչպես օրինակ՝ *երես>էրէս, երկաթ>*
էրզատ, երկար>էրզրն, երևալ>էրէվնուշ, երկանք>էրզօնկ, երկինք>
էոնինկ, եփել>էպուշ:

Խոսվածքում բառասկզբի՝ *ը*-ից առաջ գտնվող *ե*-ի դիմաց հե-
տևյալ բառերում առկա է *ի* ձայնավոր՝ *երեք>իրէկ, երեկո>իրիգուն,*
երեցակին>իրիցկին, երիկամ>իլիզքմօն. սա գրեթե ընդհանրական է
բոլոր բարբառների համար, և ինչպես նշում է Հ. Մուրադյանը. «Առ
այսօր դեռևս անհայտ են այն պատճառները, որոնք խթան են
հանդիսացել այդ փոփոխությունների համար»²⁰:

¹⁸ Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն* (այսուհետ՝ ՀԲ), Ե., 1953, էջ 397:

¹⁹ Հ. Աճառյան, *Քննություն Գիլիկիայի բարբառի*, Ե., 2003, էջ 22-24:

²⁰ Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն* (այսուհետ՝ ՀԼՊՔ),
հ. 1, Ե., 1982, էջ 117-118:

Բառասկզբի *ե*-ի դիմաց *ղ* ձայնորդից առաջ միայն *եղբայր* բառում է, որ գրական հայերենի *ե*-ն դարձել է *ա՝ ախպար*: Ինչպես հայտնի է, ուսումնասիրողները *ե>ա* համապատասխանությունը համարում են բարբառային հին գոյացություններ, որոնք առաջացել են դեռևս նախապատմական ժամանակաշրջանում, իսկ դրանցից միայն *եղբայր* բառն է, որ իր *աղբար* և *ախպէր* տարբերակներով տարածված է հայերենի գրեթե բոլոր բանավոր-խոսակցական տարբերակներում²¹:

Բազմավանկ բառերի առաջին վանկի *ե*-ն դառնում է *է՝ լէղի, շէրէպ, դէրէք, թէքուր, ձէձուշ* և այլն: Բացառություններ են *լեզու>լիզու, ցերեկ>ցորէկ* բառերը: Ըստ Հ. Աճառյանի՝ *ցերեկը* դարձել *ցորէկ* է դարձել *օր* բառի նմանությամբ²²:

Բառամիջի շեշտակիր *ե* հնչյունին համապատասխանում է *է* ձայնավոր՝ *թե>թէվ, խեւք>խէկ, մեղր>մէղըր, տեղ>դէղ* և այլն: Վերջնավանկում գտնվող *է* ձայնավորը հիմնականում դրսևորված է *է*-ով: Որոշ բառերում, սակայն, *է*-ի դիմաց առկա է *ի*: Օրինակ՝ *ավել>ավիլ, ավեր>ավիր, զկեռ>զըղիր, ցորեն>ցօրին*, իսկ *ուղեղ* բառը դարձել է *էղու* (*էղուս* ցրկէծավ՝ Ուղեղս թափվեց):

Հ. Աճառյանը միավանկ բառերի սկզբում գրաբարյան *ռ* հընչյունի դիմաց Համշենի բարբառում փաստել է *օ*, ինչպես նաև *էօ, յէօ, յէ, յօ* հնչյունակապակցությունները (օրինակ՝ *որ>յէօր, յօր, օր, որս>էօյս, որձ>էօյց, ողն(լեռան)>յէօղ, էօղ, ոչ>էօչ, յէչ*)²³:

Համեմատելով մեր բարբառախոսների և Հ. Աճառյանի բերած օրինակները՝ ակնհայտ է դառնում, որ ժամանակի ընթացքում *ռ*

²¹ Հ. Աճառյան *Հայոց լեզվի պատմություն*, մաս Բ, Ե., 1951, էջ 414-415, Է. Աղայան, *Լեզվաբանական հետազոտություններ*, Ե., 2003, էջ 71-74, Հ. Մուրադյան, ՀԼՊՔ, էջ 126-127:

²² Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 27:

²³ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 30:

հնչյունի երկբարբառային արտասանությունը թերևս պարզեցվել է (որս-*էօյս>էյս*, որձ-*էօյց>էյծ*), իսկ *ռչ* ժխտական բառը *յէչ*-ի փոխարեն դարձել է *հէճ* կամ *հիճ*, այսինքն՝ *յ>հ* (*Հիճ* անլ մըտկին պօնը չսն՝ Ոչ էլ պետքն է): Ինչ վերաբերում է *որ* շաղկապի *յօր* հնչատարբերակին, ապա, ըստ մեր բարբառախոսների, միայն ձայնավորին հաջորդող դիրքերում է *որ*-ը հանդես գալիս *յօր* հնչաձևով: Օրինակ՝ *Կընա յօր* թէզ մը կաս: *Ասան յօր կա հէճ*: Իսկ բաղաձայն հնչյունին հաջորդող *որ*-ը՝ *օր* հնչատարբերակով է դրսևորվում, ինչպես՝ *Աստավ, օր չի կալ* (*Ասաց, որ չի գա*):

Երկվանկ բառերի բառասկզբի *ռ* ձայնավոր հնչյունին համապատասխանում է *օ* պարզ ձայնավորը (*օճխար, օճիլ, օճիկ (ոջլոտ), օյջուշ (որոճալ), օսկի*):

Խոսվածքի միավանկ մի քանի բառերում բառասկզբի *ռ*-ն դառնում է *է* (*որձ>էյծ, որս>էյս, որթ>հորթ>հէշտ*: Հարկ է նկատել, որ խոսվածքի որոշ բառերում տեղի է ունենում հետևյալ ուշագրավ փոփոխությունը. *ռ*-ն *ր* ձայնորդից առաջ դառնում է *է*, իսկ *ռ*-ին հաջորդող *ր*-ն փոխվում է *յ*-ի (*որս>էյս, որսալ>էյսընուշ, որձ>էյծ, չորս>չէյս, գործում էր>կէյձ գընէր, փորս>փէյս (Փէյս ցալի գու՝ Փորս ցալում է)*:

Ուտք բառում *ռ*-ի դիմաց ունենք *յօ, յէ, օ* (*յօտկ, յէտկ* բայց նաև՝ *օտկ*), և ըստ մեր բարբառախոսի՝ տարեցները *յէտկ* են ասում, մյուսները կա՛մ *յօտկ*, կա՛մ *օտկ*: *Ողջ* բառի *յօխճկ, յօխճկը* («բոլորը միասին, ամբողջ» իմաստներով) հնչատարբերակները, որ փաստել է նաև Հ. Աճառյանը, այսօր էլ գործածվում են Համշենի բարբառում: Կենաց ասելիս նրանք գործածում են այս բառը. «*Յօխճկը* պօլէր (բոլոր) ըլլիս» (այսինքն՝ Հարազատներդ ողջ-առողջ լինեն): Բարբառում առկա է նաև *յօխճուկ* բառը՝ «ամբողջ» իմաստով (*Յօխճուկ* օրը կօրծ գընէլ՝ Ամբողջ օրը գործ էի անում): *Ուլ* և *որ* դերանունները (*որ*-ը՝ նաև շաղկապ) ստանում են նախաձայն *ւլ*, և *ռ*-ի դիմաց ունենում

ենք *վէ* հնչյունակապակցությունը՝ *վէվ (ուվ)*, *վէր (որ)*: Օրինակ՝ *Վէրը* ասիմ, *վէրը* վնյ ծըկիմ (Որը ասեմ, որը թողնեմ): *Վէվ* աստավ, տնն անդմուն ըդաձ ան (Ով ասաց, որ այդպես է եղել):

Հարկ է նշել, որ միավանկ բառերի դեպքում բառամիջի *ռ*-ի դիմաց առկա է է համապատասխանությունը (*ձոր>ծէր, բողկ>պէղգ, գող>կէղ, դող>տէղ, խոգ>խէգ, թոք>թէկ, խոտ>խէտ, նոր>նէր, չոր>չէր, պոչ>բէչ, սոխ>սէխ, փոր>փէր*: Բառամիջի շեշտակիի *ռ*-ն բազմավանկ բառերում ևս դառնում է է՝ *լակոտ>լագէտ, խաղող> հավէղ, խնձոր>խընձէր, մատնոց>մաղնէծ, սողոց>սէղէծ, բորոտ>պօրէղ, կոտոշ>գօղէշ, ոջլոտ>օճլէղ, ցեխոտ>ջօնէղ*: Հ. Աճառյանը իր ուսումնասիրության մեջ, սակայն, է-ին գուգահեռ փաստել է *օ* նաև *էօ* երկբարբառային արտասանությամբ ձևեր, որոնք այսօր բարբառում չեն գործառում: Օրինակ՝ *լակոտ>լագէտ, խնձոր>խընձէտ, խաղող>հավէտ, խմոր>խըմէտ, խաղող>խաղօղ* են²⁴:

Բարբառում, ինչպես նկատել է նաև Հ. Աճառյանը, *ւ* բաղաձայնից առաջ *ռ*-ն միավանկ բառերում դարձել է *ու*, ինչպես, օրինակ՝ *գոմ>կում, ծոմ>ձում, մոմ>մում*: (Լուսը գըդոթ ան, *մում* մը հառգն՝ Լուսը կտրվելու է, մոմը պատրաստի՛ր: Զաղգըմն առաճ ընէր *ձում*՝ բննին գու՝ Զատիկից առաջ նրանք ծոմ են պահում): Մեր գրանցումներում, սակայն, այս երևույթն առկա է նաև բազմավանկ *գոմէշ* բառում, որը դարձել է *կումէշ*: Հարկ է հավելել նաև, որ *դամոն* (սալոր) և *մէռոն* բառերում խոսվածքում *ն*-ից առաջ ունենք *ռ>ու* հնչյունափոխություն՝ *տամուն, մէռուն*:

Ու ձայնավորը հիմնականում մնում է անփոփոխ՝ *ուղուշ, ուտծուն, սուղ, դուն, քուն* և այլն, բայց *գլուխ, գութան* և *փշուր, կակուղ* բառերում դառնում է է՝ *կըլէխ, քէտան, փըշէրկ, գագէղ* (նաև

²⁴ Հ.Աճառյան, ՔՀԲ, էջ 33:

գագռուղ) (Սեդնին վերայեն փըշերկը սըրպօ: Կըլէխըս (գլուխս) ցավի գու: Ըմուն գագէղ հաժ մըն էր):

Հինհայերենյան *ի* ձայնավորը Ունիէի Բալլուղ գ.-ի խոսվածքում բոլոր դիրքերում՝ ն՝ բառասկզբում, ն՝ բառամիջում, ն՝ բառավերջում, ընդհանուր առմամբ փոփոխություններ չի կրել (*լիկը, գընիգ, միս, սիդ (սիրտ), ջիդ (վիզ), հինկ (հինգ), խընօմի, գաշի, մադնի (մատանի), դարի (տարի), քօնի (քանի), քինի (քէնի)*):

Խոսվածքում հինհայերենյան երկբարբառները չեն պահպանվել. դրանց համապատասխանում են պարզ ձայնավորներ: Այսպես՝ հին հայերենի *այ* շեշտակիր երկբարբառի դիմաց այստեղ առկա է առաջնալեզվային *ւ* (*այդ>ւնդ, այս>ւս, հայս>հւս* (խմոր), *գայլ>կւլ, ծայր>ծւր, կայծ>գւծ, հայր>հւր, տայգր>դւկըռը*): Հարկ է նշել, որ *այ* երկբարբառը խոսվածքում *ն* բաղաձայնից առաջ դառնում է *ը* (*այն>ըն, լայն>լըն, ձայն>ժըն*): Օրինակ՝ Ըներ *ծըն-ծէր* հօնեծին հէճ (Նրանք ձայն-ձուն չհանեցին): Հին հայերենի շեշտանախորդ *այ* երկբարբառի դիմաց խոսվածքն ունի դարձյալ *ւ* (*այրիկ>ւրիգ, կայծակ>գւծւկ, այրվել>ւրուշ (վառվել)*²⁵, *վայրի>վւրի, քայլել>քւլուշ*):

Բառավերջի բաց վանկում *այ* երկբարբառը, ինչպես ընդհանրապես հայերենում, վերածվում է պարզ *ա* ձայնավորի (*ագոս, փագլա (բակլա), դըդա, սադօնա (սատանա)*):

Ունիէի Բալլուղ գ.-ի խոսվածքում, ինչպես մյուս բարբառներում, հին հայերենի *աւ* երկբարբառին համապատասխանում է պարզ *օ* ձայնավոր՝ *օրէնկ, օրտնուշ (օրհնել), օր, յօտը, օծ* և այլն:

Ոյ երկբարբառն այստեղ ևս հանդես է գալիս հայերենի ընդհանուր պատմական հնչյունափոխության սահմաններում՝ իբրև

²⁵ Խոսվածքում *այրել* հասկացությունը դրսևորվում է նաև *կօլուշ*՝ գոլացնել հետաքրքիր բառաձևով:

ոյ>ու անցում՝ անոյշ>օնուշ, բոյթ>փութ, բոյն>պուն, հանգոյց> հօնգուստ, ընկոյզ>ընգուզ և այլն:

Հին հայերենի՝ շեշտի տակ գտնվող փակ վանկի *էա* երկբարբառը դարձել է *է. պարէվ, յէրնէկ, սէվ*: Միայն *ցորեան* բառն է, որ խոսվածքում դարձել է *ցօրին*:

Գրաբարյան *իւ* երկբարբառի դիմաց խոսվածքը հիմնականում ունի *ու* ձայնավոր. այսպես՝ *ալուր, արուն, հուսուշ (հյուսել), ձին>ծուն, ձիւթ>ծուտ, սին>սուն*: Միայն *-ություն* ածանցի դեպքում է տեղի ունենում *իւ>ի* անցում. *կօղուտին, ախպարուտին, ուրախուտին և այլն*:

Ղ-ից առաջ գտնվող *էւ (իւ)* երկբարբառի դիմաց առկա է է՝ *կէղ, կէղածի, յէղ*:

Բաղաձայնական համակարգը

Հ.Աճառյանը, քննելով Համշենի բարբառի բաղաձայնական համակարգը, փաստել է, որ «Բաղաձայնները ներկայացնում են երեք տարբեր դրություն»²⁶: Բարբառի երեք ճյուղերում այն ներկայանում է տարբեր ձևերով: Այսպես՝ Մալայում (իր հիշատակումով հին բնիկ Համշենցիք) բաղաձայնական համակարգը եռաստիճան խլազուրկ է. առկա են ձայնեղներ (*բ, գ, դ, ձ, ջ*), շնչեղ ձայնեղներ (*բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛*) և շնչեղ խուլեր (*փ, ք, թ, ց, չ*):

Տրապիզոնի գյուղերի խոսվածքներում առկա է երկաստիճան բաղաձայնական համակարգ. ձայնեղներ՝ *բ, գ, դ, ձ, ջ* և շնչեղ խուլեր՝ *փ, ք, թ, ց, չ*:

²⁶ Հ. Աճառյան, ՔՀԲ, էջ 18-19:

Ճանիկում, որի մեջ ներառված է նաև խնդրո առարկա խոսվածքը, բաղաձայնական համակարգը եռաստիճան է, և շնչեղ ձայնեղներ չկան. կան ձայնեղներ՝ *բ, գ, դ, ձ, ջ*, խուլեր՝ *պ, կ, տ, ծ, ճ*, շնչեղ խուլեր՝ *փ, ք, թ, ց, չ*:

Ճանիկի խոսվածքի որոշ բաղերում նկատելի են նաև քմայնացած բաղաձայններ. օրինակ՝ գայլ-*կ'սլ*, գող-*կյէող*, *կ'էղ*, քայլել-*ք'սլուշ*:

Ա. Ղարիբյանը, անդրադառնալով Համշենի բարբառին, այն դիտարկում է որպես «Կը» ճյուղի եռաստիճան խլազուրկ համակարգ ունեցող բարբառ, այսինքն՝ ձայնեղ հնչյունները վերածվում են շնչեղ ձայնեղների, իսկ խուլերը՝ ձայնեղների: Նա այս բարբառի հայրենիքը Տրապիզոնը և նրանից արևմուտք ընկած շրջաններն է համարում: Գիտնականը տարբերակում է Ճանիկի խոսվածքը Տրապիզոնի բարբառից և համարում է, որ «Ճանիկցիների խոսվածքը պատկանում է տեղաշարժ-տեղափոխության երկրորդ ենթախմբին, այսինքն՝ ձայնեղները վերածվում են խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների, որից էլ ստացվում է եռաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ»²⁷:

Մեր դիտարկումները, սակայն, վկայում են, որ Համշենի բարբառի բաղաձայնական համակարգի՝ Հ. Աճառյանի դասակարգումը, այնուհետև Ա. Ղարիբյանի անդրադարձը այս հարցին, ըստ որոնց՝ բարբառում առկա են շնչեղ ձայնեղներ, այսօր ժամանակավրեպ է. Համշենի բարբառի ոչ մի խոսվածքում այսօր չեն պահպանվել նրանց հիշատակած շնչեղ ձայնեղները: Բոլորը խոսում են գրեթե ընդհանուր մեկ բարբառով, որում բացակայում են շնչեղ ձայնեղները: Բաղաձայնական համակարգը, կարծում ենք, եռաշարք է.

²⁷ Ա. Ղարիբյան, ՀԲ, էջ 397:

ձայնեղ-խուլ տեղափոխություն տեղաշարժով ձայնեղները դարձել են խուլեր, խուլերը՝ ձայնեղներ:

Ունիեի Բալլուդ գ.-ի խոսվածքում բաղաձայնական համակարգում տեղի են ունեցել հետևյալ հիմնական փոփոխությունները.

1. Բառասկզբում գրաբարի ձայնեղ պայթական և կիսաշփական հնչյունները վերածվել են խուլերի՝ *p>պ, q>կ, η>տ, ձ>ծ, ջ>ճ* (պագուկ, պօնուշ (բացել), պէրօն (բերան), կօնգրդուշ (գանգատվել), կիր(գիր), կըլղորուշ (զորել), տընուշ (դնել), տառնուշ (դառնալ), տընտուս, տըմ առնուշ (դիմանալ), տըրգիծ, ծէվուշ, ծի, ծէր (ձոր), ճուր (ջուր):

2. Միջձայնավորային և բառասկզբի հետձայնավորային դիրքերում, ինչպես նաև *p*-ից հետո *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղները դարձել են պարզ խուլեր՝ *պ, կ, տ, ծ, ճ*: Օրինակ՝ *հակնուշ, կօկ (զոզ), թակավօր, խապուշ, օձիլ, իրսկ (ուրագ), բակնուշ (պագել), օծ (օձ), թըյճուշ (թրջել), գաշտուշ (կարդալ), գարկուշ (ամուսնանալ), մէյճուս (մրջուն), էյծ (որձ), այճ (արջ), սըրպուշ* և այլն

3. Ճանիկի այս խոսվածքում բառասկզբի *պ, կ, տ, ծ, ճ* խուլ հնչյուններին համապատասխանում են *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղները՝ *բագաս, բադ, բադուշ, բադատօնկ (պադատանք), բաբ, բըդդեր (պղտոր), գախ ընուշ, գըջուշ (կծել), գըրագ, դօնուշ (տոնել), դաբգուշ (տապակել), դընգուշ (տնկել), ձաղիգ, ձըլուշ, ձըձուշ, ձընուշ, ձէծ (ծոց), ջօնկ (ճանկ), ջաշ, ջէրմագ* և այլն:

Բառամիջի միջձայնավորային և բառավերջի հետձայնավորային դիրքերում գտնվող *պ, կ, տ, ծ, ճ* խուլերի դիմաց ևս առկա են ձայնեղ *բ, գ, դ, ձ, ջ* հնչյունները՝ *աբուր, շաբիգ, ձագուշ, դագ, գադու, գօղէշ (կոտոշ), գուդ, բադ (պատ), գարիջ, գօջագ, օյջուշ (որոճալ), օնիձուշ (անիծել)*:

Բառամիջի և բառավերջի *փ, ք, թ, ց, չ*-ի դիմաց խոսվածքն ունի *պ, կ, տ, ծ, ճ* հնչյուններ: Օրինակ՝ *էպուշ, աղաճուշ (աղաչել), խընօծի, խէպ (խոփ), գօնէպ (կանեփ), գատ (կաթ)* և այլն:

Ըստ Հ.Աճառյանի՝ Համշենի բարբառում առկա է տարնմանական *հ (հաղ, հաղուշ)*, սակայն Ճանիկի շրջանում *խ*-ն մնում է *խ*²⁸: Հարկ է նշել թե՛ խնդրո առարկա խոսվածքում, թե՛ հիշյալ տարածաշրջանի այլ խոսվածքներում *խ*-ն մնում է *խ*՝ բացառությամբ *խաղող* բառի, որում առկա է տարնմանական *հ* (Ունիեի Բալլուղ՝ *հավէղ, ճենիկ՝ հավօղ, Սամսոն՝ հավէղ, Օրդուի Չիբուխլու՝ խավէղ/հավէղ, Օրդու՝ հավօղ/խավֆօղ* ²⁹):

Ունիեի Բալլուղ գ.-ի խոսվածքում պայթական ու կիսաշփական հնչյուններից առաջ գտնվող *ք*-ին համապատասխանում է ձայնորդ *յ* (*մէճում (մրջուն), այձատ (արծաթ), կէղ (կորտ), բէղ (պորտ), թէյտուլ (թրթուր), ցույղ (ցուրտ), զայտուն (զարթուն), վայղիկ (վարտիք)* և այլն) (Յօիսճկը կիշերը *ցըղըն* քուն էլլի *չայծի, զայտուն* մընծի, այսինքն՝ Ամբողջ գիշեր ցրտից քնել չկարողացա, արթուն մնացի):

Համշենի բարբառին բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից է *ղ, թ* պայթական հնչյուններից առաջ գտնվող *ք*-ի դիմաց խուլ շփական *շ* հնչյունի առկայությունը: Օրինակ՝ բուրդ>պուշտ, երդումն>էշտըվօնկ, երթալ>էշտուշ, խորթ>խէշտ, կարդալ>գաշտուշ, մարդ>մաշտ, մորթել-մօշտուշ, հորթ>հէշտ և այլն:

Հարկ է փաստել, որ այս երևույթը մասամբ դրսևորված է նաև Կարինի բարբառի որոշ խոսվածքներում, որին մենք անդրադարձել

²⁸ Հ. Աճառյան, ԲՀԲ, էջ 48:

²⁹ Տե՛ս ԼԻ արխիվ, տետրեր հ. 336, 52, 187, 39, 94, 99բ, 252:

ենք՝ քննելով Բասենի խոսվածքի հնչյունական համակարգի առանձնահատկությունները³⁰:

Խնդրո առարկա խոսվածքում *րս* հնչյունակապակցությունը դառնում է *յս՝ հարս-հայս, որս-էյս, որսալ-էյսընուշ, չորս-չէյս*:

Բառավերջի և բառամիջի *նր* հնչյունակապակցության դիմաց առկա է հավելական *դ՝ ծանր-ձօնորը, ծանրանալ-ձօնորոնուշ, սանր-սօնորը, սանրել-սօնորուշ* (Կընա *ձօնորը* ճըվալը հուզապի՝ ր՝ Գնա ծանր պարկը այստեղ բե՝ր):

Փոխազդեցական հնչյունափոխության է ենթարկվել բառամիջի *նլ* հնչյունակապակցությունը, որի դիմաց առկա է առնմանական *լլ. բանալի-պօլլինկ, պօլնինկ, ելանել-էլլուշ, լինել-ըլլուշ* (Հայսը *պօլլինկնին* զոյսուցած ունի՝ Հարսը բանալիները կորցրել է):

Պայթականներից և կիսաշփականներից առաջ երբեմն տեղի է ունենում *ն*-ի հավելում՝ *քիթ-քինտ, տքոց-դընկունը, կանաչ-գանանճ*:

Մր (մո) հնչյունակապակցության մեջ ավելանում է հավելական *բ* հնչյունը. *համարք-հոմբարք, համրել-հոմբրուշ, օմր-ումբր*:

Օտար բառերի բառասկզբի *դ*-ին որոշ բառերում համապատասխանում է շփական *դ*, այլ դեպքերում՝ ետնալեզվային խուլ պայթական *կ. դազ-դազ, դայիմ-դայիմ, դասսաբ-կասաբ, դավուրմա-կավուրմա, դափաղ-կապաղ* և այլն:

Եզրակացություն

Այսպիսով՝ քննելով Համշենի Ճենիկի ենթաբարբառի Ունիեի Բալլուղ գ.-ի խոսվածքը՝ ըստ ձեռքի տակ եղած փաստացի նյութերի, ինչպես նաև հիմնվելով մեր բարբառախոսների նոր

³⁰ **Հ. Խաչատրյան**, *Կարնո բարբառի Բասենի խոսվածքի մի դրսևորում Շիրակի մարզում*, Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան, միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2024, էջ 31-32:

հարցումների վրա, պետք է նշել, որ դիտարկվող խոսվածքը բնութագրվում է հետևյալ հնչյունական հատկանիշներով.

1. ԼԻ արխիվի նյութերը, շրջանառության մեջ դրված Համշենի բարբառին վերաբերող բանահյուսական նմուշներն ու բառարանները, ինչպես նաև մեր բանավոր հարցումները մեզ բերել են այն համոզման, որ որ Հ. Աճառյանի առանձնացրած Համշենի բարբառի երկու տիպերի էական տարբերությունները այսօր չկան: Ժամանակի ընթացքում թերևս այդ խոսվածքները խառնվել են իրար, և կարելի է ասել, որ շատ չնչին տարբերություններով հանդերձ՝ այսօր Աբխազիայում ապրող հայերը խոսում են հիմնականում մեկ ընդհանուր խոսվածքով:

2. Ունիեի Բալլուդ գ. խոսվածքի ձայնավորական համակարգը հին հայերենի համեմատությամբ հիմնականում մնացել է անփոփոխ. միայն ավելանում են *օ*, *օ* ձայնավորները:

3. Համաձայն Համշենի բարբառի բաղաձայնական համակարգի՝ Հ. Աճառյանի դասակարգման՝ բարբառում առկա են շնչեղ ձայնեղներ: Մեր դիտարկումները, սակայն, վկայում են, որ այսօր Համշենի բարբառի ոչ մի խոսվածքում չեն պահպանվել նրա հիշատակած շնչեղ ձայնեղները: Բոլորը խոսում են գրեթե ընդհանուր մեկ բարբառով, որում բացակայում են շնչեղ ձայնեղները: Բաղաձայնական համակարգը եռաշարք է. ձայնեղ-խուլ տեղափոխություն տեղաշարժով ձայնեղները դարձել են խուլեր, խուլերը՝ ձայնեղներ:

4. Համշենի Ունիեի խոսվածքում հանդիպում է բարբառին հատուկ մի ուշագրավ հնչյունափոխություն. *ւ*, *ն* ռնգայիններից առաջ *ա* ձայնավորը դառնում է *օ*:

5. Միավանկ բառերի բառասկզբի *ռ*-ի դիմաց խոսվածքում առկա է *է* (*որս>էյս, որձ>էյձ*):

6. Ձայնաբանական երևույթներից Համշենի բարբառին բնորոշ կարևորագույն հատկանիշ է *դ*, *թ* պայթականներից առաջ գտնվող

ը-ի դիմաց խուլ շփական շ հնչյունի առկայությունը (բուրդ>պուշտ, մարդ>մաշտ):

Khachatryan Hasmik - Observations on the Phonetic Features of the Hamshen Dialect.-In this article, we have examined the phonetic system of the Hamshen dialect, presenting the current state of the speech of the Hamshen Armenians living in Abkhazia.

1. Our observations have led us to the conclusion that the main differences of the two types of the Hamshen dialect distinguished by H. Acharyan do not exist today. Over time, perhaps, these speech types have mixed together, and one can say that, despite very minor differences, the Armenians living in Abkhazia today use mainly one common speech.

2. According to H. Acharyan's classification of the Hamshen dialect consonant system, there are voiced aspirates in the dialect. However, our observations show that today none of the Hamshen dialect speeches has preserved the voiced aspirates evidenced by him. Everyone speaks almost a single common dialect, in which voiced aspirates are absent. The consonant system is divided into three rows: With the voiced-to-voiceless shift, the voiced ones have become voiceless, and the voiceless ones have become voiced. For example: *beran>peron*, *glorel>kəldorush*, *dnel>tənush*, *dzi>tsi*, *jur>chur*, *pagh>bagh*, *ktsel>gəjush*, *tapakel>dabgush*, *tsaghik>dzaghig*, *chash>jash*, etc.

3. One of the noteworthy phonetic changes characteristic of the Hamshen dialect is vowel sound interchange *a>o* before the nasals *m*, *n* (*ban>pon*, *aman>omon*, *amis>omis*, *tan>ton*, *tsamak>tsomak*, *anali>onli*, etc.).

4. Among the phonetic changes, the most important characteristic of the Hamshen dialect is the presence of the voiceless fricative sound *sh*

before the r followed by the plosives d, t (burd> (pusht, mard>masht, kardal>gashtush, etc.).

Keywords: Khaghtik Province, Hamshen dialect, phonetic system, voiceless sound, voiced aspirate, vowel, m, n nasal sounds.

Khachatryan Hasmik, PhD in Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

Хачатрян Асмик - Наблюдения над фонетическими особенностями амшенского диалекта.-В данной статье мы рассмотрели фонетическую систему амшенского диалекта, представляя современное состояние говора амшенских армян, проживающих в Абхазии.

1. Наши наблюдения привели нас к тому убеждению, что различий между двумя типами амшенского диалекта, выделенных Г.Ачаряном, ныне не существует. Пожалуй, со временем произошло смешение этих диалектов между собой, и есть основания утверждать, что несмотря на весьма незначительные различия, у армян, живущих сегодня в Абхазии, в основном один общий говор.

2. В системе согласных амшенского диалекта, согласно классификации Г.Ачаряна, присутствуют придыхательные звонкие согласные. Однако наши наблюдения свидетельствуют о том, что сегодня ни в одном из говоров амшенского диалекта не сохранились упомянутые им придыхательные звонкие согласные. Все говорят почти на одном общем диалекте, в котором отсутствуют придыхательные согласные. Система согласных - это трехрядная система: смещением «звонкий -глухой» звонкие стали глухими, глухие - звонкими. Например: берán (рот)>пэрón, глорел (катать) >кълдоруш,

днел (положить)>тънуш, дзи (лошадь)>ци, джур (вода)>ч'ур, паг' (холодный) > баг', кц'ел (кусать)>гъджуш, тапакел (жарить)>дабг'уш, ц'агиПк (цветок)>дзаг'ик, ч'аш (обед)>джаш и т. д:

3. Среди наиболее заметных типичных фонематических изменений в амшенском диалекте-превращение гласной а в о перед носительными звуками м, н (бан>пон, аман > омон, амиПс (месяц) > омиПс, тан (пахта) > тон, анали (пресный) > онли и т. д.).

4. Из фонематических явлений, характерных для амшенского диалекта, важнейшей особенностью также является наличие глухого фрикативного звука ш вместо р'перед взрывными звуками д, т^h, (бур'т^h /шерсть/ > пушт, мар'т^h /человек/ >машт, кар'т^hал /читать/ > гаштуш и т. д.).

Ключевые слова: провинция Хагтык, амшенский диалект, фонетическая система, глухой звук, придыхательные звуки (аспира-ты), гласные, носовые звуки м, н.

Хачатрян Асмик, кандидат филологических наук, доцент, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.